ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

25 սեպտեմբերի 2024թ. թիվ 1063

Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ, Մ.ՔՈՉԱՐՅԱՆԻՆ
ԵՎ Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՏԱՇԻՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ու մ  եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Ռուբեն Մխիթարյանին, ավագ մասնագետ Մանուշակ Քոչարյանին և առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Անի Ղազարյանին ս/թ սեպտեմբերի 26-ին մեկ օրով գործուղել ք.Տաշիր՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
25/09/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 25
ք.Վանաձոր